«Այս դեռ ոչինչ։ Հասարակ ամենօրեայ իրողութիւններ են։ Խօսքս կտրելով ասաց խանը։ —որ կարծեմ ձեր կողմերն էլ յաճախ են պատահում։ բայց եթէ անցեալ 1880 ին այս կողմերը լինէիք։ այն ժամանակ իսկ որ նշանաւոր գործեր կը տեսնէիք։ Այն ժամանակ աւազակների խմբերը բնակիչներից շատ էին։ որոնք ասպատակում էին օր ցորեկով։ մորթում էին ակն յայտնի։ մի կատարեալ անիշխանութիւն։ իսկ մենք օր ու գիշեր ղէնքը ձեռներիս անքուն ստիպուած էինք պահպանել մեր գլուխը»։

—«Կարծեմ շէյխ—Իբադուլլահի արշաւանքի ժամանակն էք յիշում։—հարցրի։

արշաւանքից յետ է դարձել. թալանել է 263 մարդի, քշել է թիւրքաց զօրքերին եւ նոցանից մի թնդանօթ է խլել։

Այս աւազակապետը ունկնդիրներից շատերին ծանօթ կը լինի լրագիրներում յիշուած իւր աւազակական գործերով։ 1880 թ. վերջերը Համզօ աղէն տեսնելով։ որ ինքը անապահով է Տաճկա—Հայաստանում։ փոխադրվեց Մագու եւ դարձաւ Թամուր աղի քիրվան. Այնուհետեւ ամեն տարի ձմերում է թղնուում գիւղումը. իսկ գարնանից մինչեւ աշուն մօտ երեսուն ձիաւորով ասպատակում է Տաճկա—Հայաստան. յարձակվում է գիւղերի վերայ։ կտրում է ճանապարհները, թալանում է. ով որ պատահի, ում որ կարող է։

Համզօ աղի խմբի մէջ գտնվում է եւ մի հայ Հասպօղնակ գիւղից.—Ալօ անունով։ Այս փուչ կենդանու առաջնորդութեամբը Համզօ աղէն անցեալ տարի քշեց յի-